



GEF



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ
ՄԱԶԾ-ԳԷՀ միջին ծավալի ծրագիր**

ԲԱՂԱԴՐԻՉ 1

Պահպանվող տարածքների համակարգի ռացիոնալացում

Արդյունք 1

**<<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի
կատարումն ապահովող իրավական ակտերի մշակում**

ԶԵԿՈՒՅՑ

**Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ
օրենսդրության վերլուծությունը**

Ե Ր Ե Վ Ա Ն 2010

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ	5
ԲՀՊՏ-ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԲԱՑԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ	6
ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԲԱՑԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ.....	13

Ն Ե Ր Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հայաստանի Հանրապետությունում շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը հանդիսանում են Հայաստանի Հանրապետության պետական քաղաքականության առանցքային ուղղություններից և յուրաքանչյուր անհատի սահմանադրական իրավունքներից մեկը, որի վկայությունն է ՀՀ Սահմանադրության 10-րդ՝ <<...պետությունն ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերականգնումը, բնական պաշարների ողջամիտ օգտագործումը>> և 33.2-րդ՝ <<Յուրաքանչյուր ոք իրավունք ունի ապրելու իր առողջությանը և բարեկեցությանը նպաստող շրջակա միջավայրում, պարտավոր է անձամբ և այլոց հետ համատեղ պահպանել և բարելավել շրջակա միջավայրը>> հոդվածները:

Շրջակա միջավայրի պահպանության ոլորտում առաջնային տեղ են գրավում բնության հատուկ պահպանվող տարածքները (այսուհետ՝ ԲՀՊՏ): ԲՀՊՏ-ների հետ կապված հասարակական հարաբերությունների կարգավորման առաջնային իրավական ակտը 2006 թ.-ի նոյեմբերի 27-ին ընդունված <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքն է, որի 3-րդ հոդվածը, <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին օրենսդրության խնդիրները>>, սահմանում է

<<ա) բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, վերականգնման, վերարտադրության և օգտագործման բնագավառներում հարաբերությունների կարգավորումը.

բ) բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, վերականգնման, վերարտադրության և օգտագործման բնագավառներում պետական քաղաքականության իրականացման հիմնադրույթների ապահովումը.

գ) կենսաբանական բազմազանության և լանդշաֆտների պահպանության, վերականգնման և բնականոն զարգացման ապահովումը.

դ) բնական էկոհամակարգերի կայունության և էկոլոգիական հավասարակշռության ապահովումը.

ե) էկոհամակարգերի բնականոն զարգացման վրա մարդածին բացասական ազդեցության կանխարգելումը կամ մեղմացումը.

զ) բնական երևույթների բնականոն ընթացքի, էկոհամակարգերի ու բնական օբյեկտների գիտական ուսումնասիրությունների ապահովումը.

է) օրենքով սահմանված դեպքերում կենսաբանական պաշարների և բնական օբյեկտների կայուն օգտագործման ապահովումն ու խթանումը.

ը) ազգաբնակչության էկոլոգիական կրթության և դաստիարակության իրականացման աշխատանքներին նպաստելը>>:

Հայաստանի ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրության վերլուծությունն ընդգրկում է իրավական կարգավորման և կառավարման բնագավառում օրենսդրությունում առկա անհամապատասխանությունների և հակասությունների հայտնաբերումը և դրանց վերացման վերաբերյալ առաջարկությունների մշակումը:

ՀՀ ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրության վերլուծության նպատակն է՝

1. ԲՀՊՏ-ների իրավական կարգավորման և կառավարման բնագավառում օրենսդրությունում առկա բացերի հայտնաբերումը և դրանց վերացման ուղղությամբ առաջարկություններ ներկայացնելը.
2. <<ԲՀՊՏ-ների մասին>> ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի միջև անհամապատասխանությունների և հակասությունների բացահայտումը.
3. ԲՀՊՏ-ների հետ կապված հասարակական հարաբերությունների իրավական կարգավորմանն ուղղված իրավական ակտերի կամ դրանցում առկա առանձին նորմերի վերաբերյալ նախագծերի մշակման և նախապատրաստման անհրաժեշտության որոշումը:

Սույն վերլուծության օբյեկտներն են՝

1. ԲՀՊՏ-ների հետ կապված հարաբերությունները կարգավերող իրավական ակտերը,
2. արգելոցների, ազգային պարկերի, արգելավայրերի ստեղծման, ինչպես նաև դրանց կառավարումն իրականացնող կազմակերպությունների կանոնադրությունների հաստատմանն ուղղված ՀՀ կառավարության որոշումները:

ԲՀՊՏ-ների մասին օրենսդրության վերլուծության ընթացքում ուսումնասիրվել են հետևյալ փաստաթղթերը.

1. <<Աջակցություն երկրի գործողություններին՝ ուղղված “Կենսաբանական բազմազանության մասին” կոնվենցիայի շրջանակներում պահպանվող տարածքների աշխատանքային ծրագրի>> շրջանակներում մշակված <<**Հայաստանի Բնության Հատուկ Պահպանվող Տարածքների վերաբերյալ օրենսդրության վերլուծությունը**>> Ձեկույցը – 2009 թ.
2. <<2012 Պահպանվող տարածքների ծրագիր-Կովկասի Էկոտարածաշրջան>> ծրագրի շրջանակներում Բնության համաշխարհային հիմնադրամի (WWF) կողմից կազմված <<**Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների օրենսդրական և ինստիտուցիոնալ հարցեր և դրանց բարելավման հնարավորություններ**>> աշխատանքային փաստաթուղթը – 2009 թ.
3. <<Կենսաբազմազանության կայուն կառավարում>> ծրագրի շրջանակներում «Գերմանիայի տեխնիկական համագործակցություն» (GTZ) ընկերության կողմից կազմված <<**Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին**>> ՀՀ օրենքի **վերլուծությունը**>> Ձեկույցը – 2009 թ.:

Անհրաժեշտ է նշել, որ սույն վերլուծությունն իր բովանդակությամբ էապես տարբերվում է վերը նշված փաստաթղթերից, որոնցում վերլուծությունները սահմանափակվել են հիմնականում <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքով: Բացի սույն օրենքից, այս Ձեկույցի կազմման ժամանակ վերլուծվել են նաև ԲՀՊՏ-ների հետ կապված հասարակական հարաբերությունները կարգավորող այնպիսի իրավական ակտեր, ինչպիսիք են՝ ՀՀ Հողային օրենսգիրքը, ՀՀ Ջրային օրենսգիրքը, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Բնապահպանական

վերահսկողության մասին>>, <<Որսի և որսորդական տնտեսության վարման մասին>>, <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքները, ՀՀ կառավարության որոշումներով հաստատված պետական արգելավայրերի և դրանց կառավարումն իրականացնող կազմակերպությունների կանոնադրությունները:

ԲՆՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՊԱՀՊԱՆՎՈՂ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՀՀ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Իրավական կարգավորման առումով, բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ օրենսդրությունը ներառում է հետևյալ իրավական ակտերը՝

1. ՀՀ Սահմանադրությունը,
2. Բնապահպանական ուղղվածության միջազգային պայմանագրերը՝ համաձայնագրերի, կոնվենցիաների, արձանագրությունների տեսքով,
3. <<Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին>> ՀՀ օրենքը-1998 թ.
4. ՀՀ Քաղաքացիական օրենսգիրքը,
5. ՀՀ Հողային օրենսգիրքը- 2001 թ.,
6. ՀՀ Ջրային օրենսգիրք- 2002 թ.,
7. ՀՀ Անտառային օրենսգիրքը – 2005 թ.,
8. <<Բնապահպանական վճարների դրույքաչափերի մասին>> ՀՀ օրենքը – 2001 թ.,
9. <<Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին>> - ՀՀ օրենքը – 2001 թ.,
10. <<Բնապահպանական իրավախախտումների հետևանքով կենդանական և բուսական աշխարհին պատճառված վնասի հատուցման սակագների մասին>> ՀՀ օրենքը – 2005 թ.,
11. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքը – 2006 թ.,
12. <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքը – 2002 թ.,
13. <<Կենդանական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը – 2000 թ.,
14. <<Բուսական աշխարհի մասին>> ՀՀ օրենքը – 1999 թ.,
15. <<Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին>> ՀՀ օրենքը – 2006 թ.,
16. <<Սևանա լճի մասին>> ՀՀ օրենքը – 2001 թ.,
17. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> ՀՀ օրենքը – 2005թ.,
18. <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքը – 2008 թ.,
19. <<Որսի և որսորդական տնտեսության վարման մասին>> ՀՀ օրենքը- 2007թ.,
20. <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության մասին>> ՀՀ օրենքը - 1995 թ.,
21. <<Բնօգտագործման դրույքաչափերի մասին>> ՀՀ կառավարության 30.12.1998 թ. N 864 որոշումը,

22. <<Բնության հատուկ պահպանվող տարածքներում մոնիթորինգի կազմակերպման և իրականացման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 30.08.2007 թ. N 1044-Ն որոշումը,
23. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների պետական կադաստրի վարման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 20.03.2008 թ. N 259-Ն որոշումը,
24. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների հողամասերը վարձակալության և (կամ) կառուցապատման իրավունքով տրամադրելու նպատակով միջգերատեսչական մրցութային հանձնաժողով ստեղծելու և միջգերատեսչական մրցութային հանձնաժողովի աշխատակարգը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 18.12.2008 թ. N 1578-Ն որոշումը,
25. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կարգը սահմանելու մասին>> ՀՀ կառավարության 22.01.2009 թ. N 72-Ն որոշումը,
26. <<Հատուկ պահպանվող ավազանային տարածքների կամ դրանց որևէ մասի ցանկը հաստատելու մասին>> ՀՀ կառավարության 19.02.2009 թ. N 159-Ն որոշումը,
27. <<Սևան>> ազգային պարկի հողամասերն անհատույց օգտագործման հանձնելու վերաբերյալ պայմանագրի մասին>> ՀՀ կառավարության 10.12.2009 թ. N 1438-Ն որոշումը:

ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրությունը ներառում է նաև պետական արգելոցների, ազգային պարկերի, արգելավայրերի ստեղծման, կանոնադրությունների և կառավարման պլանների հաստատման, բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին ՀՀ կառավարության, ինչպես նաև Հայկական ՄՍՀ Մինիստրների Խորհրդի որոշումները:

Բացի այդ՝ ՀՀ բնապահպանության նախարարի 27.10.2008 թ N 364-Ա հրամանով հաստատվել է <<Բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման պլանների մշակման մեթոդական ցուցումները>>:

ԲՀՊՏ-ՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀՀ ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԲԱՅԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ

Վերը նշված ծրագրերի շրջանակներում ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրության վերլուծականները հիմք ընդունելով՝ սույն վերլուծության շրջանակներում ընդհանրացվել են հայտնաբերված բացերը:

ԲՀՊՏ-ների վերաբերյալ օրենսդրության բարելավումը ռազմավարության առանցքային խնդիր է, որի լուծումը հնարավորություն կստեղծի ապահովել ինչպես տարբեր կատեգորիաների ԲՀՊՏ-ների համապատասխանեցումը միջազգային չափանիշներին, այնպես էլ արդյունավետ կառավարումը, այդ թվում՝ մասնակցային կառավարման մեխանիզմների ներդրումը:

ԲՀՊՏ-ների վերաբերյալ Հայաստանի օրենսդրության վերլուծությունից ակնհայտ է, որ անհրաժեշտ փոփոխություններ ու լրացումներ պետք է կատարվեն ինչպես <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքում, այնպես էլ ՀՀ Ջրային և Հողային օրենսգրքերում, <<Տեղական ինքնակառավարման մասին>>,

<<Բնապահպանական վերահսկողության մասին>> և <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքներում:

1. <<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> - ՀՀ օրենքն ընդունվել է 2006 թ. նոյեմբերի 27-ին: Այն կարգավորում է Հայաստանի Հանրապետության բնության հատուկ պահպանվող տարածքների՝ որպես բնապահպանական, տնտեսական, սոցիալական, գիտական, կրթական, պատմամշակութային, գեղագիտական, առողջապահական, ռեկրեացիոն արժեք ներկայացնող էկոհամակարգերի, բնության համալիրների ու առանձին օբյեկտների բնականոն զարգացման, վերականգնման, պահպանության, վերարտադրության և օգտագործման պետական քաղաքականության իրավական հիմունքները:

Մինչ սույն օրենքի ընդունումը գործել է 1991 թ. դեկտեմբերի 17-ին ՀՀ Գերագույն Խորհրդի կողմից ընդունված համանուն օրենքը, որը Հայաստանի անկախության հռչակումից հետո առաջիններից էր: Հետագայում ի հայտ բերվեց Ժամանակակից միջազգային նորմերին, մասնավորապես Բնության պահպանության միջազգային միության (IUCN) չափանիշներին, և ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխանող փոփոխությունների և լրացումների շրջանակը: Վերջինիս արդյունքում, ՀՀ բնապահպանության նախարարության <<Բնական պաշարների կառավարման և չքավորության նվազեցման ծրագրի>> շրջանակներում, մշակվեց և ՀՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվեց ներկայումս գործող օրենքը:

Չնայած սույն օրենքը ակնհայտ առավելություններ ունի մինչև 2007 թ. գործող համանուն օրենքի նկատմամբ, սակայն վերլուծությունների արդյունքում ի հայտ են բերվել մի շարք բացեր, որոնք զգալիորեն խոչընդոտում են ԲՀՊՏ-ների արդյունավետ կառավարման գործընթացներին: Դրանք են՝

1. օրենքի 3-րդ հոդվածի վերնագիրը և բովանդակությունը չեն համապատասխանում միմյանց.
2. օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում տրված չեն ԲՀՊՏ-ների դասակարգման սկզբունքները: Միջազգային, հանրապետական և տեղական նշանակության ԲՀՊՏ-ների դասակարգման համար օբյեկտիվ ցուցիչային համակարգի բացակայությունը կարող է դիտվել որպես առկա ԲՀՊՏ համակարգի որակական բացթողում.
3. օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերում տրված չեն էկոլոգիական միջանցքների, պահպանման գոտիների և կենսոլորտային տարածքների իրավական կարգավիճակները.
4. օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չեն ԲՀՊՏ-ների ստեղծման մեխանիզմները.
5. օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով սահմանված չեն հավատարմագրային կառավարման հանձնման մեխանիզմները.
6. Օրենքի 6-րդ հոդվածում տրված չէ ԲՀՊՏ-ների կառավարման պլանների կազմման նպատակը.
7. օրենքի 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածները հակասում են ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի պահանջին՝ սահմանված չեն պետական արգելավայրերի, բնության

- հուշարձանների և պահպանման գոտիների ռեժիմներն ու դրանց առանձնահատկությունները.
8. օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերն ըստ էության կարգավորում են ոչ թե հատուկ պահպանվող տարածքների պահպանության հարցեր, այլ հողերի սեփականատերերի միջև հարաբերությունների ու ֆինանսավորման աղբյուրների վերաբերյալ հարցեր.
 9. օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված չեն արգելավայրերի և բնության հուշարձանների օգտագործման առանձնահատկությունները.
 10. օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված չեն ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող պարտադիր վճարների տեսակները, չափը և վճարման կարգը.
 11. որպես օրենքի կարգավորման առարկա սահմանված չեն ԲՀՊՏ-ների ստեղծման և կառավարման գործընթացներին առնչվող կողմերի միջև ծագող իրավահարաբերությունները.
 12. օրենքի 3-րդ գլխում հստակ չեն տարբերակված ԲՀՊՏ-ների ուսումնասիրության և մոնիթորինգի առանձնահատկությունները.
 13. Օրենքի 29-րդ և 30-րդ հոդվածներում բացակայում են դրույթներ ԲՀՊՏ-ների կառավարման բնագավառում հասարակության մասնակցության ապահովման մեխանիզմների վերաբերյալ:

Առաջարկվող քայլերը. <<ԲՀՊՏ-ների մասին>> ՀՀ օրենքում հայտնաբերված բացերի վերացման նպատակով անհրաժեշտ է մշակել <<ԲՀՊՏ-ների մասին ՀՀ օրենքում փոփոխություններ կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծ, որում պետք է հաշվի առվեն հետևյալ հարցերը.

- ա) օրենքի 3-րդ հոդվածի վերնագիրը և բովանդակությունը անհրաժեշտ է համապատասխանացնել միմյանց.
- բ) օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով անհրաժեշտ է հստակ և տրամաբանության շրջանակներում, մասնագիտորեն հիմնավորված ձևակերպումների ու կյանքում ռեալ կիրառելի մեխանիզմների ապահովմամբ սահմանել ԲՀՊՏ-ների դասակարգման սկզբունքները (հիմքերը) և մեխանիզմները (ու՞մ կողմից և ի՞նչ ձևով): Դասակարգման նորմերի կարգավորման համար կարող են օգտագործվել ՀՀ միջազգային պայմանագրերով սահմանված կամ դրանց տրամաբանությունից բխող, ինչպես նաև մասնագիտական և իրավաբանական տեսանկյունից համատեղ ընդունելի ձևակերպումներ: Դասակարգման հետ կապված սկզբունքային առաջարկն այն է, որ ամրագրվի նորմ, համաձայն որի, ըստ նշանակության, որպես միջազգային կարող են դասակարգվել ցանակացած կատեգորիաների ԲՀՊՏ-ներ.
- գ) օրենքի 4-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով կարգավորվող նորմերը, տարբեր կատեգորիաներ ունեցող բնության հատուկ պահպանվող տարածքների մեկ էկոլոգիական ցանցում միավորման, էկոլոգիական միջանցքների և պահպանական գոտիների սահմանման մասին, ռեալ կյանքում առանց խնդիրների դրանց կյանքի կոչելու համար անհրաժեշտ է օրենքով հստակ կարգավորել էկոլոգիական

միջանցքների, պահպանման գոտիների և կենսոլորտային տարածքների իրավական կարգավիճակները, ինչպես նաև դրանց ստեղծման, դասակարգման և կառավարման մեխանիզմները: Մինևույն ժամանակ անհրաժեշտ է համապատասխան լրացումներ կատարել ՀՀ Հողային օրենսգրքի 19-րդ և 20-րդ հոդվածներում՝ ապահովելով հստակ մեխանիզմներ այդ տարածքների նկատմամբ իրավունքների գրանցման գործընթացն ապահովելու համար.

- դ) չնայած ՀՀ կառավարության 22.01.2009 թ. թիվ 72-Ն որոշմամբ սահմանվել է «Բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման կարգը», սակայն պարզվել է, որ նշված որոշմամբ ըստ էության չեն կարգավորվում ԲՀՊՏ-ների ստեղծման մեխանիզմները: Անհրաժեշտ է հիմնական մեխանիզմները կարգավորել օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասով: ԲՀՊՏ-ների ստեղծման մեխանիզմները մշակելիս, այլ անձանց սեփականության իրավունքով պատկանող հողերի մասով, անհրաժեշտ է առաջնորդվել <<Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին>> ՀՀ օրենքի դրույթներով.
- ե) օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 9-րդ մասերը վերախմբագրել՝ դրանք համապատասխանեցնելով ՀՀ Հողային օրենսգրքի, <<Տեղական ինքնակառավարման մասին>>, <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>>, <<Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին>> ՀՀ օրենքների համապատասխան նորմերին.
- զ) օրենքի 5-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով հավատարմագրային կառավարման անհրաժեշտությունը սահմանելու դեպքում բոլոր մեխանիզմները և սահմանումները պետք է համապատասխանեն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի պահանջներին, չհակասեն <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքին՝ համաձայն որի, պետական կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքները օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման, պետական կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել միայն վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ կամ պետական կազմակերպության կանոնադրությամբ
- է) օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասում հստակ շարադրել ԲՀՊՏ-ների կառավարման պլանների կազմման նպատակները.
- ը) օրենքի 18-րդ, 19-րդ և 20-րդ հոդվածներում անհրաժեշտ է հաշվի առնել ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի պահանջը՝ համաձայն որի, բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով են սահմանվում ֆիզիկական և իրավաբանական անձանց իրավունքների և ազատությունների սահմանափակումները և նրանց պարտականությունները: Տվյալ դեպքում անհրաժեշտ է օրենքով հստակ սահմանել պետական արգելավայրերի, բնության հուշարձանների և ԲՀՊՏ-ների պահպանման գոտիների ռեժիմներն ու դրանց առանձնահատկությունները.

- թ) Օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ և 5-րդ մասերը վերախմբագրել՝ ՀՀ Քաղաքացիական, Հողային օրենսգրքերի, «<Տեղական ինքնակառավարման մասին>>, «<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> ՀՀ օրենքների համապատասխան նորմերի պահպանմամբ.
- ժ) օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասում անհրաժեշտ է ավելացնել 2 նոր կետեր, որոնցով պետք է սահմանվեն արգելավայրերի և բնության հուշարձանների օգտագործման առանձնահատկությունները.
- ժա) օրենքի 26-րդ հոդվածի 2-րդ մասում փոփոխություն կատարելիս անհրաժեշտ է հաշվի առնել, որ ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից վճարվող պարտադիր վճարների տեսակները, չափը, վճարման կարգը սահմանվում են բացառապես Հայաստանի Հանրապետության օրենքներով՝ համաձայն «<Իրավական ակտերի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի պահանջի.
- ժբ) օրենքի 3-րդ գլուխը ձևակերպել այնպես, որ հստակ լինեն ԲՀՊՏ-ների ուսումնասիրության և մոնիթորինգի տարբերությունները.
- ժգ) օրենքում անհրաժեշտ է մտցնել ԲՀՊՏ-ների կանոնադրության և դրա բովանդակության վերաբերյալ դրույթներ, որոնցում կարտացոլվեն պահպանվող տարածքների հետ կապված խնդիրները, ստեղծման նպատակները, այդ տարածքներում իրականացվող հիմնական գործառույթները, իրավական ռեժիմի առանձնահատկությունները.
- ժդ) օրենքի 29-րդ և 30-րդ հոդվածներում անհրաժեշտ է ավելացնել դրույթներ ԲՀՊՏ-ների կառավարման բնագավառում հասարակության ներգրավման մեխանիզմների վերաբերյալ, մասնավորապես՝ նշելով, որ ***«<Ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ ներառյալ հասարակական կազմակերպությունները և կրոնական միավորումները, աջակցություն են ցուցաբերում պետական մարմիններին բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարման, պահպանության, օգտագործման և վերականգնման հետ կապված միջոցառումների իրականացման գործում: Պետական մարմինները այդ միջոցառումների իրականացման ժամանակ պարտավոր են հաշվի առնել քաղաքացիների և հասարակական միավորումների առաջարկությունները>>***:

2. Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ, 38-րդ և 45-րդ հոդվածներում որպես պարտադիր և հիմնականում պետության պատվիրակած լիազորություն ամրագրելով բնապահպանական կադաստրների վարումը, բնության պահպանությունն ու վերահսկողությունը համայնքի վարչական սահմաններում առկա բնական պաշարների օգտագործման և պահպանման միջոցառումների նկատմամբ՝ չեն հիշատակված ԲՀՊՏ-ները և դրանց կառավարման գործընթացներում տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) իրավասությունները: Մինչդեռ «<Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին>> ՀՀ օրենքի 5-րդ և 11-րդ հոդվածներում հստակ նշվում են ԲՀՊՏ-ների կառավարման խնդիրներում ՏԻՄ-երի իրավասությունները:

Առաջարկվող քայլերը. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում նախատեսվող անհրաժեշտ փոփոխություններն ու լրացումները կապված են ԲՀՊՏ-ների նկատմամբ ՏԻՄ-երի իրավասությունների հետ: Այդ նպատակով օրենքի 32-րդ, 38-րդ և 45-րդ հոդվածները պետք է համապատասխանացվեն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 5-րդ և 11-րդ հոդվածներին: Մասնավորապես՝ 45-րդ հոդվածում անհրաժեշտ է ամրագրել, որ համայնքի ղեկավարը որպես պարտադիր լիազորություն՝

- ա) մասնակցում է համայնքի վարչական սահմաններում գտնվող միջազգային և հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքներին վերաբերող պետական ծրագրերի ու կառավարման պլանների մշակմանը և ապահովում է դրանց շրջանակներում իրեն վերապահված մասերի իրականացումը.
- բ) աջակցում է համայնքի վարչական սահմաններում գտնվող միջազգային և հանրապետական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության ռեժիմների ապահովմանը.
- գ) լիազորված պետական մարմնին ներկայացնում է առաջարկություններ համայնքի վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների ստեղծման վերաբերյալ.
- դ) կազմակերպում է համայնքի վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների պահպանության, օգտագործման, մոնիթորինգի, գիտական ուսումնասիրությունների իրականացումը և կառավարման պլանների մշակումը.
- ե) աջակցում է բնության հատուկ պահպանվող տարածքների վերաբերյալ հասարակության իրազեկման բարձրացմանը, ինչպես նաև գիտական ու կրթադաստիարակչական ծրագրերի մշակմանը և իրականացմանը.
- զ) իրականացնում է համայնքի վարչական սահմաններում գտնվող տեղական նշանակության բնության հատուկ պահպանվող տարածքների կառավարումը:

Բացի այդ, համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին», «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին», «Բնապահպանական վերահսկողության մասին», «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» ՀՀ օրենքների համապատասխան հոդվածների՝ անհրաժեշտ է մշակել ՀՀ օրենքի կամ ՀՀ կառավարության որոշման նախագիծ՝ ՏԻՄ-երին օրենքներում նշված բնապահպանական հարցերի նկատմամբ պատվիրակած լիազորություններ տալու մասին:

3. ՀՀ Հողային օրենսգրքով ԲՀՊՏ-ների մասով հողային հարաբերությունները հիմնականում կարգավորվում են 19-րդ, 20-րդ, 36-րդ, 47-րդ, 48-րդ, 75-րդ, 76-րդ հոդվածներով և ըստ գործառնական նշանակության դասակարգվում են որպես բնապահպանական հողեր: Վերջիններիս հողային հարաբերությունները համահունչ են «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի համապատասխան դրույթներին:

Ինչ վերաբերվում է օրենսգրքի 3-րդ և 43-րդ հոդվածներում ՏԻՄ-երին վերապահված իրավասությունների շրջանակներին, ապա կրկին անգամ հիշատակված չեն համայնքների վարչական սահմաններում առկա ԲՀՊՏ-ների նկատմամբ ՏԻՄ-երի իրավասությունները:

Առաջարկվող քայլերը. ՀՀ Հողային օրենսգրքում նախատեսվող փոփոխություններն ու լրացումները կատարելիս առաջնահերթ ուշադրություն պետք է դարձնել օրենսգրքի 3-րդ և 43-րդ հոդվածների և <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքում վերը նշված փոփոխությունների ու լրացումների ներդաշնակությանը: Բացի այդ՝ անհրաժեշտ է համապատասխան լրացումներ կատարել ՀՀ Հողային օրենսգրքի 19-րդ և 20-րդ հոդվածներում՝ ապահովելով հստակ մեխանիզմներ էկոլոգիական միջանցքների, ԲՀՊՏ-ների պահպանման գոտիների և կենսոլորտային տարածքների նկատմամբ իրավունքների գրանցման գործընթացն ապահովելու համար:

4. ՀՀ Ջրային օրենսգրքում ամրագրված չեն ջրագրական բնույթի ԲՀՊՏ-ների նկատմամբ իրավահարաբերությունների կարգավորման սկզբունքները: Հայտնի է, որ Հայաստանում առկա են յուրահատուկ ջրագրական բնույթի այնպիսի պահպանվող տարածքներ, ինչպիսիք են՝ Սևանա և Արփի լճերը, որոնք գրանցված են նաև Միջազգային նշանակության խոնավ տարածքների, հատկապես ջրոլո թռչունների բնադրավայրերի մասին կոնվենցիայի (Ռամսարի կոնվենցիա) միջազգային խոնավ տարածքների ցանկում, ջրաերկրաբանական 48 և ջրագրական 38 բնության հուշարձանները: Հարկ է նշել նաև, որ Հայաստանի պետական արգելոցներում, մյուս ազգային պարկերում, արգելավայրերում առկա են բազմաբնույթ ջրային ռեսուրսներ:

Առաջարկվող քայլերը. ՀՀ Ջրային օրենսգրքում փոփոխությունների ու լրացումների վերաբերյալ նոր հոդվածներում անհրաժեշտ է ներառել ինչպես ՏԻՄ-երի իրավասությունները, այնպես էլ ԲՀՊՏ-ներում ջրային ռեսուրսների իրավահարաբերությունները կարգավորող հարցերը:

5. <<Բնապահպանական վերահսկողության մասին>> և <<Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին>> ՀՀ օրենքներում ամրագրված չեն ԲՀՊՏ-ներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները՝ պահպանության ռեժիմների ապահովման, կառավարման պլաններով նախատեսված գործողությունների իրականացման, թույլատրելի գործողությունների իրականացման վերաբերյալ օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության մեխանիզմները:

Առաջարկվող քայլերը. Սույն օրենքներում նոր հոդվածներով անհրաժեշտ է ամրագրել ԲՀՊՏ-ներում բնապահպանական օրենսդրության պահանջների կատարման և հողերի օգտագործման ու պահպանման նկատմամբ վերահսկողության առանձնահատկությունները:

**ՊԵՏԱԿԱՆ ԱՐԳԵԼԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ԿԱՌԱՎԱՐՈՒՄՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ
ԲԱՑԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱՑՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ՔԱՅԼԵՐԸ**

ՀՀ տարածքում առկա են 27 պետական արգելավայրեր, որոնցից 13-ը գտնվում են ՀՀ Բնապահպանության նախարարության, 13-ը՝ ՀՀ Գյուղատնտեսության նախարարության և մեկը՝ ՀՀ Էկոնոմիկային նախարարության ենթակայության տակ և կառավարվում են պետական ոչ առևտրային կազմակերպությունների կողմից (աղյուսակ 1):

Աղյուսակ 1.

Արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունները

h/h	Նախարարությունը և ՊՈԱԿ-ը	Արգելավայրերը
1	ՀՀ բնապահպանության նախարարություն	
	<<Խոսրովի անտառ>> պետական արգելոց	1. <<Խոյր վիրապ>> 2. <<Գոռավանի ավազուտներ>> 3. <<Գիլան>>
	<<Շիկահող>> պետական արգելոց	4. <<Սոսու պուրակ>> 5. <<Ջանգեզուր>>
	<<Դիլիջան>> ազգային պարկ	6. <<Ախնաբաղի կենու պուրակ>>
	<<Սևան>> ազգային պարկ	7. <<Գիհու նոսրանտառային>>
	<<Արևիկ>> ազգային պարկ	8. <<Բողաքարի>>
	<<Արգելոցապարկային համալիր>>	9. <<Սև լիճ>> 10. <<Որդան կարմիր>> 11. <<Ջերմուկի ջրաբանական>> 12. <<Հանքավանի ջրաբանական>>
	<<Անտառային գիտափորձարարական կենտրոն>>	13. <<Զիկատար>>
2	ՀՀ գյուղատնտեսության նախարարություն	
	<<Հայանտառ>>	1. <<Արջատիլենու>> 2. <<Բանքսի սոճու>> 3. << Գորիսի>> 4. << Հեր-Հերի նոսրուտային>> 5. << Գյուլագարակի>> 6. << Կովկասյան մրտավարդի>> 7. << Մարգահովիտի>> 8. << Արզականի և Մեղրաձորի>> 9. << Իջևանի>> 10. << Գանձաքարի>> 11. << Ջերմուկի>> 12. << Եղեգնաձորի>> 13. << Գետիկի>>
3.	ՀՀ էկոնոմիկայի նախարարություն	
	<<Երևանի ֆիզիկայի ինստիտուտ>>	1. <<Արագածի ալպյան>>

1. Արգելավայրերի կանոնադրությունները. Առ այսօր ՀՀ կառավարության որոշումներով հաստատվել են հետևյալ 10 արգելավայրերի կանոնադրությունները՝ «Ջանգեգուր», «Ջերմուկի ջրաբանական», «Հանքավանի ջրաբանական», «Գիլան», «Խոր վիրապ», «Գոռավանի ավազուտներ», «Սոսու պուրակ», «Որդան կարմիր», «Սև լիճ» և «Զիկատար», որոնք բոլորն էլ գտնվում են ՀՀ բնապահպանության նախարարության ենթակայության տակ: Ընդ որում՝ նշված արգելավայրերի կանոնադրությունների մշակման և ՀՀ կառավարության կողմից հաստատման գործընթացներն ընդգրկում են 2002-2010 թվականները:

Կանոնադրությունների վերլուծության ընթացքում հայտնաբերվել են հետևյալ հիմնական բացերը:

1. Համաձայն «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 2-րդ մասի՝ **«Յուրաքանչյուր պետական արգելավայրի խնդիրները և ռեժիմի առանձնահատկությունները սահմանվում են տվյալ պետական արգելավայրի կանոնադրությամբ»:** Չնայած նշված արգելավայրերի կանոնադրություններում համապատասխանաբար բերված են խնդիրները, պահպանության ռեժիմներն ու թույլատրելի գործողությունները, սակայն դրանք հիմնականում կրկնում են միմյանց, հատկապես պահպանության ռեժիմի մասով, հաշվի չառնելով յուրաքանչյուր արգելավայրի նպատակային նշանակությունը: Մյուս կողմից կանոնադրություններով արգելավայրերի պահպանության ռեժիմների սահմանումը հակասում է ՀՀ Սահմանադրության 83.5. հոդվածի պահանջին:
2. Կանոնադրություններում բացակայում են դրույթներ արգելավայրերի պահպանության ռեժիմների ապահովման մեխանիզմների վերաբերյալ:
3. Կանոնադրություններում բացակայում է արգելավայրերի նշանակության վերաբերյալ դրույթները՝ հանրապետական, թե՛ տեղական նշանակության:
4. Կանոնադրություններում բացակայում են դրույթներ շահագրգիռ կողմերի հետ հասարակական հարաբերությունների կարգավորման վերաբերյալ:
5. «Գիլան», «Ջերմուկի ջրաբանական», «Հանքավանի ջրաբանական» արգելավայրերի կանոնադրություններում բացակայում են դրույթներ պահպանման գոտու վերաբերյալ: Չնայած մյուս արգելավայրերի համար տրվում է պահպանման գոտու պատկերացումը, սակայն սահմանների նկարագրությունը բացակայում է:
6. Բոլոր արգելավայրերի կանոնադրություններում բացակայում են դրույթներ արգելավայրերի կառավարման պլանների վերաբերյալ:

Առաջարկվող քայլերը. Արգելավայրերի կառավարման գործընթացների արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ քայլերը.

1. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքում նախատեսվող փոփոխություններ կատարելուց հետո վերանայել նշված 10 արգելավայրերի կանոնադրությունները և մշակել մյուս 17 արգելավայրերի կանոնադրությունները՝ ներառյալ սահմանների և պահպանման գոտու սահմանների նկարագրությունները.

2. որոշել յուրաքանչյուր արգելավայրի նպատակային նշանակությունը և սահմանել յուրաքանչյուրի նշանակությունը՝ ըստ հանրապետական և տեղական նշանակության.
3. յուրաքանչյուր արգելավայրի համար որոշել շահագրգիռ կողմերի հետ հասարակական հարաբերությունների կարգավորման մեխանիզմները.
4. յուրաքանչյուր արգելավայրի համար մշակել կառավարման պլան՝ համաձայն <<ԲՀՊՏ-ների մասին>> ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի:

2. Արգելավայրերի կառավարումն իրականացնող կազմակերպությունների կանոնադրությունների վերլուծության արդյունքում հայտնաբերվել են հետևյալ բացերը.

1. <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի կանոնադրությունում բացակայում են դրույթներ իր ենթակայության տակ գտնվող արգելավայրերի կառավարման վերաբերյալ.
2. <<Խոսքովի անտառ>> և <<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ների կանոնադրություններում թեև ամրագրված են դրույթներ արգելավայրերի կառավարման վերաբերյալ, սակայն դրանք տարանջատված չեն արգելոցների կառավարման առանձնահատկություններից.
3. <<Երևանի ֆիզիկայի ինստիտուտ>> ՊՈԱԿ-ի կողմից <<Արագածի ալպյան>> արգելավայրի կառավարման վերաբերյալ պաշտոնական տեղեկատվությունը բացակայում է:

Առաջարկվող քայլերը. Անհրաժեշտ է վերանայել <<Հայանտառ>> ՊՈԱԿ-ի կանոնադրությունը՝ դրանում ներառելով իր ենթակայության տակ գտնվող արգելավայրերի կառավարման վերաբերյալ դրույթներ: Վերանայման ենթակա են նաև <<Խոսքովի անտառ>> և <<Շիկահող>> պետական արգելոց>> ՊՈԱԿ-ների կանոնադրությունները՝ արգելավայրերի կառավարման առանձնահատկությունները արգելոցների կառավարման առանձնահատկություններից տարանջատելու նպատակով: